ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1955 Общественные науки

ԳՐՔՈՒՅԿ ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայրենական պատերազմում Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար հայ ժողովրդի պանծալի զավակների անօրինակ հերոսության, խիզախության և անձնազոհության մասին է պատմում Ս. Վ. Խարմանդարյանի «Հայ ժողովրդի մարտական համագործակցությունը Սովետական Միության ժողովուրդների հետ Հայրենական Մեծ պատերազմում» գրքույկը, որ լույս է տեսել վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ։

Գրքում հանդամանորեն խոսվում է Հայրենական պատերազմի տարիներին թիկունքում կատարվող աշխատանքի, ռազմաճակատին ցույց տրվող օգնության մասին։ Ուշագրավ փաստեր են բերվում արդյունաբերության, գյուղատնտեսության բնագավառներում ձեռք բերված նվաճումների վերաբերյալ, նվաճումներ, որոնք ի սպաս էին դրվում ռազմաճակատին, օգնում էին մեր մարտիկներին կատարելու իրենց պարտքը հայրենիքի հանդեպ, ջախջախելու գերմանա-ֆաշիստական հորդաներին։

Ընթերցողը գրքույկում կարող է գտնել հարուստ նյութ ճակատում հայ ժողովրդի պանծալի զավակների մարտական սխրագործությունների մասին։ Հեղինակը պատմում է հայ ժողովրդի դյուցազուն զավակների — Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի, անվեհեր օդաչու Գազարյանի և շատ ուրիշների մարտական սխրագործությունների մասին։

Հեղինակը, հենվելով Սովետական մամուլի, ինչպես և արխիվային հարուստ տվյալների վրա, բերում է Մոսկվայի, Լենինգրադի, Ստալինգրադի, Սևաստոպոլի պաշտպանության գործում հայ ժողովրդի պանծալի զավակների՝ գեներալների, սպաների, մարտիկների անմահ սխրագործությունները բնութագրող բազմաթիվ փաստեր։ Մոսկվայի պաշտպաններից մեկի մասին Ռյա Էրենբուրգը գրել է «Հայաստանի զավակ, հաղթանդամ, սևաչյա սերժանտ Հակորյանը զոհվեց որպես հերոս։ Հակորյանը, տեսնելով, որ ֆաշիստները շրջապատել են ավագ լեյտենանտ Վասիլևին, նետվեց թշնամիների վրա։ Նա ոչնչացրեց 16 ֆաշիստների։ Նա ծանր վիրավորված պառկած էր Սմոլենսկու մարգի մութ խրճիթներից մեկում։ Երբ մի պահ գիտակցությունը վերականգնվեց, նա հարցրեց։ — «Վասիլևը կենդանի է» (էջ 23)։

Հակորյանը մեկն էր հայ ժողովրդի հազարավոր փառապանծ զավակներից, որոնք կրծքով պաշտպանեցին Սոցիալիստական հայրենիքը։

Լենինգրադի պաշտպանության հետ անխզելիորեն կապված է Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի անունը։

Լենինգրադի հերոսական պաշտպան, գեներալ մայոր Բենիամին Գալստյանի մասին Նիկոլայ Տիխոնովը գրել է.«Գալստյանի անունը մենք կմտցնենք Լենինգրադի հերոսների, պաշտպանների ցուցակներում, որոնց չի կարող խունացնել ժամանակը և ընդմիշտ կհիշենք նրան իբրև մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերը» (էջ 25)։ Գնդապետ Ս. Խաչիկյանը ճակատից գրած իր մի նամակում նշում էր, որ հայ մարտիկները երջանիկ են համարում իրենց, որ գտնվում են Լենինգրադի փառապանծ պաշտպանների շարքում և իրենց ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի, ադրբեջանցի, ուզբեկ եղբայրների հետ ձեռք ձեռքի տված պաշտպանում են Լենինի անմահ քաղաքը։

Ստալինգրադի համար մղվող հերոսական մարտերում իրեն անթառամ փառքով պսակեց № հայկական հրաձիգ զվարդիական դիվիզիան։ Այդ օրերին «Պրավդա»-ն հայ մարտիկների մասին գրում էր.«Նրանք ամենուր արիաբար մարտնչում են Հայաստանի և ողջ Սովետական հայրենիքի համար, որտեղ այդ պահանջում է նրանցից զինվորական պարտքը։

Հայ մարտիկները բազմաթիվ սխրագործություններով հարստացնում են հայ ժողովրդի փառքը, իր ազատագրման համար մղվող պայքարում նրա դրսևորած խիզախության տրադիցիաները, որոնք դարերի միջից հասել են մեզ» (էջ 30)։

Հեղինակը, այնուհետև, պատմում է Կովկասի պաշտպանության, Ղրիմի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթյան ռեսպուբլիկաների ազատագրման համար հայ մարտիկների ցուցաբերած մասսայական հերոսության ու անձնվիրության մասին, պատմում է Բեռլինի գրավման ժամանակ գեներալ մայոր Նվեր Սաֆարյանի գլխավորած հայկական միավորման մարտական սխրագործությունների մասին։

Գրքույկում զգալի տեղ է տրված Ուկրաինայի օկուպացված տերիտորիայում գործող՝ Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատի «Հաղթանակ» հայկական պարտիզանական ջոկատի գործողություններին, Բելոռուսիայի, Ղրիմի օկուպացված տերիտորիայում գործող հայ պարտիզանների մարտական սխրագործություններին։

Հայ ժողովուրդը իր շարքերից տվեց Սովետական Բանակի 54 գեներալ։ Հայ ժողովրդի 106 դյուցազուն զավակներ Հայրենական պատերազմի ճակատներում ցուցաբերած հերոսության համար արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանը, իսկ 66802 հոգի պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։

Ս. Վ. Խարմանդարյանի «Հայ ժողովրդի մարտական համագործակցությունը Սովետական Միության ժողովուրդների հետ Հայրենական Մեծ պատերազմում» գրքույկը ընթերցվում է հետաքրքրությամբ։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ